



ԿՐՕՆԵԿԵՆ ՊԵՏՄԵԿԵՆ ԲԵՆԵՍԻՐԵԿԵՆ ԵՒ ԲԵՐՈՅԵԿԵՆ

ԹԻՒ Ե. — ՇՐՋԱՆ Ե.

1872

ՏԱՐԻ Ե. — ՄԸՅԻՍ 31

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ՊՏՈՒՂ ՅԱՆԿԱԼԻ

ՈՐ Է

ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԵՍ ՏԵՐ.

Հ Ա Ր Յ Ի Ն .

(Ն-Բ-Ն-Ի-Ն-Ի-Ն):

«Ի չէն հայցե՛մք մեզ օգնու-լի-ն Ա-ժնա-սորք Լըրըրդո-լի-ն, օգնեա՛ մեզ ի նեղու-լի-ան մերո՛ւմ,» :

Համարձակապէս մատչել ի խնդրուածս առ Աստուած, ի գէպ է առնուլ ի ձեռին զմի ոք ի սիրելեաց նորա միջնորդ և փաստաբան. և նովաւ աղաչել զերեսս նորա, և թախանձամբ հայցել զխնդիր, զի զոր օրինակ՝ անձանթք ոչ կարեն մուտ առնել առ թագաւորն՝ եթէ ոչ միջնորդութեամբ սիրելեացն, ըստ այսմ և անձանթքացեալքն առ Աստուած յանցանօք մեզաց ոչ կարեն համարձակաբար մատչել

առնա, եթէ ոչ առնուցուն զմի ոք ի սիրելեաց նորա. ըստ այսմ և երանելիսարար. մատեաւ առ Աստուած ի հայցուածքս, այլ ոչ առանց միջնորդի, խնդրէ անտի զօգնութիւն համարձակաբար, և ոչ առանց բարեխօսի. վասն որոյ վստահութեամբ զիմազրաւ եղեալ կարգէ ասելով « ի քէն հայցեմք, » որպէս թէ գէ՛մ յանդիման ունելով զԱստուած համարձակապէս բարբառի առնա. ապաքէն ըստ անշուշտ խոստմանն Վրիստոսի թէ « ուր երկու և երեք միաբանեսցին յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա, » աստանօր ակն յանդիման տեսանի, զի ժողովս հաւատացելոց յանուն նորա, միացեալք ի մի սիրա, և ի մի լեզու հաւատով և ջերմեանդ հոգւով, յանձն առնու Վրիստոս ընդ նոսա լինել. ի նոցա աղօթել առ Հայր, զնոցա աղաչանս լսել՝ ամենալուր ականջօք. հաւատոյ տեսութեամբ ականարկեալ իմանի, ըստ որում զլուխ եկեղեցւոյ, և մեր ան-

դամք անդամոց նորա ըստ առաքելական բանին, որպէս ասէ սուրբն Օգոստինոս ի վերայ բանին Գաւթի. Սաղ. 21. յըսկիզբն « Խոնարհեցո՞ Տէր զունկն քո », աղօթեսցէ վասն մեր, և աղօթեսցէ ի մեզ, և աղօթեսցի ի մէնջ. աղօթեսցէ վասն մեր իբրև քահանայ մեր. աղօթէ ի մեզ իբրև գլուխ մեր. աղօթի ի մէնջ իբրև Աստուած մեր: Ապա ծանկոյնք զմեր ձայնըս ի նմա, և զձայնս նորա ի մեզ. աղօթի ի կերպարանս աստուծոյ. աղօթէ ի կերպարանս ծառայի. անդ արարիչ, աստ արարած. աղօթեմք առ նա նովաւ, և ի նմա. և ասեմք ընդ նմա. և ասէ ընդ մեզ. ասեմք ի նմա. ասէ ի մեզ: Բայց աստանոր աղօթելն է ոչ ըստ բանի կամաց, և ոչ ըստ բանի շրթանց կամ դործոց, այսինքն աղօթական բանս ասել առ Հայր, կամ ծնրադրութիւնս առնել առաջի Հօր, հառաչել արաստուել որպէս զօղանջին ոմանք: Այլ որպէս մեծն Գրիգոր ասէ, զիրք ԻԲ. Բարոյականաց, գլ. ԺԵ. « բարեխօսելն կամ աղօթելն որդւոյ՝ է ցուցանել Հօր զանձն իւր մարդ, և ազաչելն վասն մարդկային բնութեան՝ է առնուլ զմեր բնութիւն ի բարձրութիւն աստուածութեան իւրոյ: Աւ ըստ սրբոյն Աերսիսի Ամբրոն. Սեկն. Սաղմոսաց գլ. ԺԵ. « Բանզի ինքն է, ասէ, որ առ ինքն վասն մեր բարեխօսէ, այս ինքն փորձ չարչարանաց մերոց մարմինն առ աստուածութիւնն. ըստ այնմ է ընդ աջմէ Աստուծոյ. որ և բարեխօս իսկ է վասն մեր », : Աւ թէ՛ « ես ազաչեցից առ հայր », . այս ինքն բարեխօսեցից զհայր, և այլ մխթարիչ տացէ ձեզ », : Յովհան. ԺԴ. 18: Որպէս գեղեցիկ խօսի Ամբրոնեան փողն յատենա-

բանութեան իւրում բացայայտելով զազաչելն բանիւ բարեխօսութեան, ի ճառն Հոգ. և ի ճառն Համբ. ըստ այնմ գորով Աստուած ընդ նոսա, և ի նոսա, և նորա ընդ նմա, և ի նմա, առնուն՝ զոր հայցեն, և ընկալնուն՝ զոր խնդրեն, և այս վճարի ի դարձմանէ կամաց նոցա առ նա, և ի յարելս սիրով ընդ նմա. վասն որոյ և նա դառնայ ի կամս տալով զհայցուածս, ըստ այնմ, « Օրինչ խնդրէք հաւատով յանուն իմ ի Հօրէ իմմէ՛ տացի ձեզ », . և թէ՛ « դարձարուք առ իս որդիք մարդկան, և ես դարձայց առ ձեզ », : Աւ զայս անշուշտ ակասանելով աչօք հաւատոյ, հայցէ անտի զօգնութիւնս յասելն « մեզ օգնութիւն », : Աստուած գորով նախախնամիչ՝ նախախնամէ զմեզ յարագամ իւրով անձառմարդասիրութեամբն, որպէս ասէ Սողոմոն Իմաստ. Չ. 8. « զփոքրն և զմեծն ինքն արար, և մի օրինակ խնամ ունի ամենեցուն », . զորմէ ասէ սուրբն Աերսէս Ամբ. ի Սեկնութեան Իմաստ. անդ. որք փոքր մարդկան կարծեացն վասն չքաւորութեան և մեծն վասն հարստութեան, հաւասար արարածք են Աստուծոյ. և խնամէ զաղքատն աստ ի չքաւորութեան պահելով և անդ ի մխթարութեան, որպէս ասաց Քրիստոս. իսկ զմեծատունն խնամ, զի տալով յընչիցն՝ զոր ետ նմա Աստուած, ողորմութիւն, սրբեսցի, և ի դատելն արդարութեամբ, նովին նմին չափեսցի: Աւ Ամբրոսիոս գրէ, զիրք Ա. ի վերայ Պաշտ. ԺԲ. « Ո՞ր գործաւոր անխնամ թողու զգործ իւր. ո՞ւրքանիցէ և ընդ վայր հարկանիցէ, զոր համարեցան հաստել. եթէ անիրաւութիւն է հօգովելն, ոչ ապաքէն մեծագոյն ևս անիրաւութիւն է

առնելն և ոչ խնամելն. զի չառնել զիմն չէ ինչ անիրաւութիւն, բայց զարարեալն չինամել՝ յետին անգթութիւն. ըստ այսմ և Գէորդ վարդապետ գրէ ի Մեկ. Ասայ. գլ. Խ՝Կ. 24. « զի չառնելն և չստեղծուն բնաւ չէր ինչ արտունջ. իսկ զարարեալն ի տանջանս մատնել՝ բազմաց անտեղի թուի, ըստ այսմ և Մովսէս ասէր: Իսկ կրկին նկատինախախնամութիւնն Աստուծոյ. ի միտս Աստուծոյ կամ յարուեստի Աստուծոյ և ի ներգործական կառավարութեան ի ժամանակի. ըստ երկրորդին զանազանապէս նախախնամէ, երբեմն բարեօք, իսկ երբեմն թոյլտուութեամբ չարի, դալ ի ճանաչումն կամաց նորա, և յուղղութիւն վարուց, մինչ զի փորձութեամբ թշնամոյն ևս պատահի բարի, կամ առաւելութիւն գործոց բարեաց. որպէս ասէ հռետորն քաջ Տէր Առաքել Արևնեաց Ապիսկոպոսն. Մեկ. Սահ. Գաւթի. հարցանէ նախ թէ վասն էր թոյլ տայ նմա այս ինքն սատանայի՝ Աստուած փորձել զմարդիկ. պատասխանէ՝ զի սատանայ պատճառ ընի ընտրելոցն ընտիր լինել. զի եթէ ոչ էր ասէ մարտոցեալ ընդ Ասխափկային՝ ոչ էր տեսեալ նա զերկինս բացեալ, և զՈրդի ընդ աջմէ շօր նստեալ: Աւ թէ ոչ էր մարտոցեալ ընդ Առասաւորչին մերոյ, ոչ էր եղեալ Առասաւորիչ աշխարհի, կամ տեսանել զԱստուածութիւնն իջեալ յԱջմիածինն. և թէ չէր մարտեալ ընդ Ադամայ՝ ոչ էր Աստուած ի բնութենէս ծընեալ, և մարդկային մարմնով յԱստուածական փառս վերածեալ: Ասան որոյ ասէ մարդարէն, « Մի՛ սպանաներ զնոսա՛ զի մի՛ մոռացին զժողովուրդ քոյ. այլ

ցրուեալ զնոսա զօրութեամբ քով, »: Աւ սուրբն Օգոստինոս գրէ, յինքեր . . գլ. ԺԱ. « Աստուած ծայրագոյն բարի գոլով ոչ իւրք թոյլ տայր չարի իմիք լինիլ ի գործս՝ եթէ չէր այնչափ բարի և ամենակարող, մինչև նաև ի չարէն առնել բարի. քանի օգուտ ծագեցոյց յանհաւանութենէ Յուդայի և յանգթութենէ շրբէից, »: Աւ սուրբն Յովհան Ոսկերերան գրէ, « Աստուած ըստ իւրում ամենազօր բարութեան առաւել պատշաճ համարեցաւ ի չարեաց հասնել բարիս, քան արդելու զչարիս. ըստ այսմ թոյլ տայ Աստուած չարեաց հասանել առ մեզ ըստ անձառ և անհաս նախախնամութեան իւրում. զի ուղղեալ զկամս մեր, խնդրիցեմք զնա ինքն՝ և զմարդասիրութիւն նորա, »: Աւ ահա այս աստանօր իմանի, զի նախ պատժօք խրատէ, որով ուղղեմք զմեզ ի բարին. երկրորդ տայ խնդրել զօրնութիւն իւր՝ որ և պատիժ՝ որ էր յինքեան չար, եղև պատճառ բարեաց. վասն որոյ պատշաճապէս երգէ « մեզ օգնութիւն, »: Աւ այս կարի իրաւամբ, զի սէր նորա բազում գոլով առ կամարարս իւր, օգնութիւն իւր ոչ անտես առնէ, այլ յարածամ ի ձեռն հրեշտակաց իւրոց առաքէ ի սէր սրբութեան իւրոյ. որպէս և Գաւթի ծանուցանէ յասելն, « Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քոյ ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քոյ, » և թէ « Բանակք հրեշտակաց Տեառն շնորջ են զերկիւղածովք իւրովք, և պահեն զնոսա, »: Օսա նոյն ինքն վկայէ յասելն առ Յակօբ, « Աս ահաւասիկ ընդ քեզ եմ պահել զքեզ յամենայն ճանապարհս քոյ, զի ոչ թողեց զքեզ, » Ծանն.

ԻՒ. 15. ուր ասէ սուրբն Լփրեմ Մեկն. Ծնն. անդ. « Եստուած էր ընդ Յակօբայ, և եցոյց զինքն նմա. և հրեշտակաց յանձն արար պահել զնա ի ճանապարհին ուր և երթայցէր. վասն որոյ ցանկայր սմա Գաւիթ ասելով, « Օգնութիւն ինձ ի Տեառնէ եկեսցէ, », և դարձեալ « Տէր է իմ օգնական և ես ոչ երկեայց, », Ըստ սրմին և երանելիս փափագեալ աղաղակէ « ի քէն հայցեմք մեզ օգնութիւն, », և զի հրամանն օգնութեան է ի Տեառնէ, որպէս և հրամանն պատուհասի, վասն այսորիկ յարակցէ բացայտարար « Եմենասուրբ Երրորդութիւն, », Զիւրդ և որպէս ասիւր սուրբ ՂԵստուծոյ՝ ասացաք սակաւուք յառաջին տան. աստ մնայ տեսանել զամենասրբութենէ նորին: Եւ արդ՝ բարս Եմենասուրբ միացուցաբար ասի ՂԵստուծոյ, որպէս Երրորդութիւնս, զի գորով երեք անձինք ի միութեան հարթ և հաւասար էութեամբ և զօրութեամբ, կամօք մի, և սրբութեամբ անչափ նոյնչափ. վասն որոյ միացուցանելով ասեմք « Եմենասուրբ Երրորդութիւն, », զոր հրեշտակք զատաբար աղաղակելով զհաւասարութիւն յայտ առնէին յօրհնել նոցա Սուրբ. Սուրբ. Սուրբ. ապա զմիութիւն հաւասարութեանն բացայայտեալ ասէին « Տէր զօրութեանց, », զնոյն և մեք առեալ գոչեմք յերգս Եկեղեցւոյ « Սուրբ Եստուած Հայր. Սուրբ Եստուած Արդի, Սուրբ Եստուած և Հոգի. ուստի անուանեմք երեքսրբեան սրբասացութիւն. ըստ այսմ և ի զիրս Եօթնկարգենի գրի երես 460. տեսանէ Եսայի ՂԵստուած նստեալ յաթոռ փառաց, զոր օրհնէին հրեշտակք ասելով « Սուրբ.

սուրբ. սուրբ. Տէր զօրութեանց, », Գատասխանէ ասէ մեկնիչն թէ սուրբդ անուն երեքինել զԵրրորդութիւն անձանց նշանակէ, տէրդ անուն միանգամ միայն ասացեալ՝ զմիութիւն էութեանն յայտ առնէ, այս եղև միտ ասէ բաբունուոյն Սիմէօնի, որ ասէ « Սուրբ՝ այս է Հայր. Սուրբ՝ այս է Արդի. Սուրբ՝ այս է Հոգի Սուրբ, », Եպա ըստ այսմ միացուցաբար երգեաց երանելիս, « Եմենասուրբ, », և ըստ նշանակութեան բառիս՝ ցուցանէ ամենեկին սուրբ լինելն՝ գորով վերացեալ յամենայն բաղադրեալ իրաց և ի բաղադրեալ ներգործութենէ, որպէս յառաջագոյն մեկնեցաք ասելով « ջինջ պարզութիւն և գերամաքուր ներգործութիւն, », և ըն. ապա ըստ սմին մտաց ևս ասաց « Եմենասուրբ, », Եւ զի բառս այս միայն ՂԵստուծոյ ասի, վասն այսորիկ յարէ ասելով « Երրորդութիւն, », սկսեալ յԵղամայ մինչև ի Վերիստոս նահապետք և մարգարէք՝ զանազան օրինակօք, և մարգարէական բանիւք խօսեցան զճմարտութենէ Եմենասուրբ Երրորդութեանն. յորոց և մինն Եստուածապատումն Մովսէս՝ զայս անձառ խորհուրդ ամենասուրբ Երրորդութեան յըսկրգբան գրոց ծանոցց յասելն « ասաց Եստուած՝ եղեցի, և եղև, », զորմէ ասէ մեծն Վարդան, ասէ մեծն Եսայի. Մեկ, Ծնն. զԼ. Ե. 11. « Խուլք լուարո՞ւք, և կոյրք տեսէք, », և ո՞վ է խուլն և կոյրն. եթէ ոչ լսէ, և ոչ տեսանէ զյայտնի աստուածաբանութիւն ասացելոցս յաղագս ամենասուրբ Երրորդութեանն. զի ո՞վ ոք արհեստաւոր յորժամ միայն իցէ, և ոչ ունիցի լսող, ասիցէ գործեսցէ զայս ինչ և զայն ինչ, այլ յայտնի է թէ՛ շարժիւր

ի բարի կամս շօրն, և բարբառէ բանն Որդի, և յօրինէր ըստ բարի կամս շողին, որ նոյն է և մի երիցն բնութիւն կամք և գործք: Իսկ ի լրման օրինաց և մարգարէից՝ մինն յերեքանձնեայ Աստուածութեան բանն և իմաստութիւն շօր Յիսուս, բացայայտ քարոզեաց մեզ յասելն առ աշակերտսն իւր «Մկրտեցէք զամենայն շեթանոս» յանուն շօր, և Որդւոյ, և շողւոյն Սրբոյ, : Եպա և սա նմին երկրպագու, և նորին շնորհաց լուսովն հոգեզարդեալ զհաւատոյ բան ի զղջմանն յառաջ ածէ, զի դիւրաւ շարժեցէ զԱստուած ի հաշտութիւն, և ընկալցի զոր հայցէ՝ անյապազ. վասն որոյ քաղցրաբանէ ասելով «ի քէն հայցեմք մեզ օգնութիւն՝ ամենասուրբ Արրորդութիւն», որպէս թէ կամի ասել «Շողով աղերսեմք», և բերանով հայցեմք ի քէն ի միութենէ, յամենայնի գերածայրեալ Որբութենէդ յերեքանձնեայ Աստուածութենէդ, զի օգնեցես մեզ յետին թշուառացելոյս և եղկելի որդւոց քոց, որք կամք ասպաւինեալ ի մարդասէր կամս մեծի Տէրութեան քոյ, և սպասեմք մեծի և առատ ողորմութեանդ քում, ըստ «Կինուէացւոցն անարժանից՝ որք ընկալան յանձինս զգթութիւն քոյ և զողորմութիւն. ուստի վերստին հայցեմք և թախանձանօք ժտեմք, լեր մեզ զօրավիդ և օգնական ի նեղութեան մերում, զի թէպէտ եմք մեղօք ծանրաբեռնեալք, այլ հաւատովք քեզ նուիրեալք. ասպա մի լիցի փակել դրանն ողորմութեան և զթոյ մարդասիրութեան, այլ հայիլ ամենատես աջօք քովք ի վշտակրութիւն մեր, որ կամք զլեակոր և ամօթապարտ առաջի մեծի բարեսիրութեան

քոյ», . դառնայ ասպա և վերստին հայցէ ասելով «օգնեա՛ մեզ ի նեղութեան մերում», : Աւ զոր նեղութենէ արդեօք ասէ. ինձ թուի թէ՛ և զերկունս տայ մեզ իմանալ, զՏոգւոյ և զմարմնոյ. ըստ առաջնոյն այս է, ըստ որում բարերարն ստեղծ զմարմին՝ որով հոգին կարողացի լինել կատարեալ առաքինութեամբ. իսկ ի տիրանալ մարմնական գործեաց՝ ոչ բարեոք լրանայ հոգեկանն. զոր օրինակ ի մաշել գործեացն արուեստականաց ոչ բարեոք գործս ի լոյս ընծայէ. և կամ չհամաձայնին աղեաց քնարին ոչ բարեոք ձայնս արտայայտէ. և զի հոգին յարաժամ սենչայ և փափազի կատարելութեան առաքինութեամբ, որպէս երեխան յարգանդի մօրն՝ յամբողջութեան. և յոչինչ կարելն՝ հիւժեալ հաշի, և ի մեծի նեղութեան մնայ. որպէս ասէ Առաքել վարդապետն, մեծ կարօտութիւն է և տուգանք, որ խնդրէ շահիլ, և ոչ կարէ լիապէս դտանել վաշխն և շահն ամենայն իրաց. վասն որոյ աստ հայցէ օգնութիւն ազատ մնալոյ ի նեղութենէ հոգւոյն, և անդորրապէս գործելոյ զհաճոյս Աստուծոյ. որպէս և Կաւիթ համաձայնեալ ասէ «Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, և լուաւ ինձ յանդորր», : Կու տես աստանօր զպէր երանելոյս առ Աստուած, զի ոչ ասէ անհետ արաղնեղութիւնս մեր զմարմնոյն, այլ հայցէ օգնութիւն ասելով, «օգնեա՛ մեզ ի նեղութեան մերում», . զի գոյով նեղութիւնն մարմնոյ՝ խթան տիրատուր վաստակոց բարեաց, և բովքնութեան մարդկան, ևս և յայսնիչ փառաց մարդասիրութեան և արդարութեան Աստուծոյ. վասն որոյ ըստ երկրոր-

դին այս ինքն ըստ մարմնոյ օգնութիւն և եթ տկարութեան հայցէ, զի կարողացի գործակցիլ ընդ հողոյ յարդիւնաւոր առաքինագործ վաստակս և եթ. ըստ որոյ և սուրբն Պետրոս Լամբ. ասէ, Սեկ. Եռակ. Գլ. Գ. 11. «Քանզի բարեկեցութիւնն ստուեր է հողոյն, և նսեմացոցիչ Աստուծոյ հայեցողութեան, նեղութեամբ ձգիմք առ նա. «ի նեղութեան իմում ես առ Տէր կարգացի», և Եւթէ «յորժամ սպանանէր զնոսա՝ խնդրէին զնա», և Ասան այսորիկ ասէ՝ ածէ ի վերայ մեր զխրատ զանազան նեղութեանց, զի իբրև զոսկի փորձեսցէ, և առ ինքն ձգեսցէ. վասն այսորիկ ասէ մի՛ լքանիր յուսահատութեամբն թէ՛ անտես կղէ յԱստուծոյ. և մի՛ վհատիր ի յանդիմանելն զքեզ՝ կամ իշխանաց բռնութեամբ կամ իւր պատուհասիւն, հիւանդութեամբ կամ աղքատութեամբ, զի սիրոյն Աստուծոյ է այս ցոյցք, որ կամի զքեզ յերկրաւորացս օտարացուցանել, և առ ինքն բարձրացուցանել. որպէս գրէ Պետրոս «Միրելիք մի՛ օտարութի համարիք զեռանդն ինչ, փորձութիւնս ձեր լիցի, այլ իբրև հաղորդեալք Քրիստոսի չարչարանացն. ահաւասիկ՝ զոր սիրեաց՝ որդւոյն շնորհեաց զչարչարանս, զնոյն և զնորին փառսն արժանացելոցն չարչարանաց», ուրեմն ապա սիրելիք որդիք են, ըստ որում ասէ, «տանջէ զամենայն որդի, զոր ընդունի», ըստ այսմ և Պուռնել. ասէ ի Սեկ. Յայտ. և այլքս Ուստի և սուրբս որպէս խթան աստուածապարզ և ընդգրկէ զնեղութիւնս մարմնականս, բայց զի մի՛ ի հարստահարութենէ տկարութեան յաղթեսցի հոգին, և կամ թափուր ի բարի գործոց մը-

նասցէ, խնդրէ և հայցէ զօգնութիւն նորա ի սաստկանայն նեղութեան ասելով, «օգնեա՛ մեզ ի նեղութեան մերում», որպէս թէ կամք են ասել, ո՞վ Տէր իմ՝ դու որ յոչնչէ գոյացուցեր զմեզ, և հասապազ մարդասիրապէս նախախնամես զանազան պարզութեամբ ձրի ողորմութեամբքով, զի նոքօք զառաքինական վարս ստացեալք վայելեսցուք զքեզ զերանութիւնդ ամենեցուն. վասն որոյ նախախնամես զմեզ՝ աղաչեմք, քաղցրութեամբ կամօք քովք, յայսմ նուազի ևս շնորհելով ամենազօր օգնութիւնդ ի նեղութեան մերում հողոյ և մարմնոյ, զեարագագէս ժամանեալ կարողացուցէ զմեզ յաղթել աշխարհի և իշխանին խաւարի այսոյն չարութեան, և բազմարդիւն պողո՛ք առաքինական վաստակոց յարիլ ի քեզ՝ ի հանդիսող տիեզերաց, և վայելել յանզրաւ յաւիտեանս զնոստացեայն քո զարքայութիւն: Եւ զի սա է մեծ և գերագոյն ձիր, կրկնէ զբարեխօսութիւն սրբոյն Յակօբայ. և նովաւ ժաէ զի վաղագոյն և արագ ընկայցի զայս օգնութիւն ասելով, «բարեխօսութեամբ և աղօթիւք», և ին. նոյն է և այս ընդ վերոգրեալ մեկնութեան. տես անդ յերես 91—94, (տես Երարատ թ. Գ. Մարտ):

Հայցեալ զայսչափ երախտիս յամենաստեղծ ձեռանէն Աստուծոյ, դառնայ ապա և հրաւիրէ զամենայն գործս հզօր ձեռաց նորա յօրհնարանութիւն, ընդ բնականս սեռից՝ զարարիչն ամենեցուն, ըստ իւրաքանչիւր կարգի՝ յասելն, «օրհնեցէք ամենայն գործք Տեսան, առեալ զայս յօրհնութենէ երկոց մանկանց՝ պտտչաճապէս երգէ. յընդմիջել օրհնութեանն՝

որոյ պատճառն է ըստ իմում ահաութեան, զի հրեշտակն՝ որ կայր ի մէջ երից մանկանց ի հնոցի, յընդմիջել բանից նոցա երեւցոյց զինքն. ուստի յարեաւ Ազարիա յառաջագաս լինելով ընկերացն և սոաց զբանս, հրաւիրելով զամենայն արարածս ի գովութիւն և յօրհնաբանութիւն արարչն. ըստ նմին և սա զեղեցկապէս ասէ յընդմիջել բանից իւրոց յերգելն՝ «Օրհնեցէք ամենայն գործք Տեառն» :

Օրհնելն զԱստուած ըստ երից իմանի, ըստ բանի մտաց, ըստ բանի շքեանց, և ըստ բանի գործոց. ըստ առաջնոյն օրհնելն հրեշտակք, ըստ երկրորդին՝ մարդիկք, ըստ երրորդին ամենայն անզգայ արարածք, ուր ամենայն գործ ասելով՝ զամենայն արարածս՝ զմանալիս՝ զզգալիս՝ և զանզգայս միանգամայն ի մէջ բերեալ հրաւիրէ յօրհնաբանութիւն: Եւ թէպէտ գործովք Տեառն՝ տիրապէս մարդն նշանակի, այլ աստանօր լայնաբար առեալ զամենայն գոյակս ցուցանէ, որպէս և Պօղոս ասնէ յասնին, «Եներևոյթքն Աստուծոյ՝ արարածովքս իմացեալ տեսանին», ուր բառիս «արարածք», բանիւ գոյացեալս ևս ի մէջ բերէ. և զի հաստիչ սոցա՝ ոչ այլ ռք, այլ միայն Վրիստոս, վասն այսորիկ ասէ՝ «զՎրիստոս թաղաւորն», Վրիստոսդ անունն օծեալ թարգմանի, և զի օծումն Վրիստոսի յերիս նկատի, անձնական, շնորհական, և հազորդական. ըստ առաջնոյն ասի օծումն՝ որով մարդկութիւնն յանձն բանին միաւորութեամբ ասի օծանիլ յաստուածութենէ անտի, և կացուցանիլ Վրիստոս կամ օծեալ, և որդի Աստուծոյ բնական, և այս եղև գոր-

ծակցութեամբ շնորհոյն սրբոյ, վասն որոյ ասացաւ ի շնորհանակի՝ «մարմնացաւ մարդացաւ, ծնաւ կատարելապէս շնորհոյն սրբով», : Ըստ երկրորդին ասի օծումն՝ ըստ համայն պարզեաց և շնորհաց շնորհոյն սրբոյ, որով ասի օծեալ շնորհոյն սրբով և զօրութեամբ, և ըստ այնմ Պօղոս, Ժ. 38. «զՅիսուս որ ի Աստուածէ՝ զոր օծն Աստուած շնորհոյն սրբով և զօրութեամբ», և ըստ Պողոմօսի՝ Առակ. «Իմաստութիւն շինեաց իւր տուն, և կանգնեաց սիւնս եօթն», և ըստ Ասայեայ. «և հանդիցէ ի վերայ նորա հոգի իմաստութեան և զօրութեան, հոգի զիտութեան և աստուածապաշտութեան, հոգի երկիւղի և հեղութեան և խորհրդոյ», : Եւ ըստ երրորդին օծումն ասի, որով օծանին հաղորդեալքն ընդ նմա հաւատով և շնորհօք. և ընթանալով զհետ շաղաց նորա, և ընդունելով ի նմանէ զանունն քրիստոնեայ, ըստ այնրմ, «և դուք օծութիւն ունիք առ սրբոյն, և զիտէք ամենեքին», : Ա. 3ովհան. Բ. 20. 27: Եւ դարձեալ «և դուք օծութիւնն զոր ընկալարուք ի նմանէ, բնակեցէք ի ձեզ», : Եւ ըստ Պօղոսի, Բ. Կորն. Ա. 21. «Եւ որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ ի Վրիստոս, և օծ զմեզ, Աստուած է, որ և կնքեաց զմեզ և ետ զառհաւատչեայ շնորհոյն ի սիրտս մեր», և դարձեալ Աբղ. «Իւղ թափեալ է անունն քո, զհետ քո ի հոտ իւրոց քոց ընթացուք», : ըստ այսմ օծման օծանիլ ասին ամենայն սուրբք և արդարք. վասն որոյ աղաղակէին ասելով Յայտ. «արարեր զսոսա թագաւորս և քահանայս Աստուծոյ մերոյ թագաւորել ի վերայ երկ-

րի, : Աւ զի սոքա և եթ ի մարդկանէ ճշմարտապէս օրհնեն և բարձր առնեն զՄատուած. վասն որոյ զեղեցիկ դասաւորութեամբ ասաց, « ՂԲրիստոս թագաւորն՝ դատող օրինաց և պսակող հնազանդելոց մեկնի, և հատուցանող ըստ իւրաքանչիւր զործոց, : և զի ըստ Աւաթի, « թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Մատուած է, : և ըստ արդար իրաւանց դատող, և պսակող զկամարարս իւր. վասն այսորիկ յիշատակեաց զթագաւորդ անուն, ըստ սմին աղաղակէին սուրբքն ի յերկինս ասելով, « գոհանամք զքէն Տէր Մատուած մեր ամենակալ՝ որ էն, և ես, և առեր զօրութիւն քո մեծ և թագաւորեցեր, : Աւ հրեշտակք հրատարակեալ գոհէին, « եղև թագաւորութիւն ամենայն տիեզերաց Տեառն մերոյ՝ և Յիսուսի Վրիստոսի իւրոյ, և թագաւորեսցէ ի վերայ ամենայնի յաւիտեանս յաւիտենից, : Ըստ այսմ և ասաց « թագաւորն, : ասպ ասել որպէս թէ կամի, ըստ երկնցն դիմաց, ամենայն զործք Տեառն էակք անզոյք օրհնեցէք ընդ մեզ զարարիչն ամենեցուն զՄատուածս ի կարգի արդեամբք զործոց ձերոց, զի սրբեաց զմեզ յանիծիցն զոր ընկալաք ի Տեառնէ՝ յասելն « անիծեալ լիցի երկիր ի գործս քո, : և դուք որդիք մարդկան՝ ժողովք հաւատացելոց օրհնեցէք զՄատուած, որ փրկեաց զձեզ անզին արեամբն իւրով ի ձեռաց սատանայի, և արար որդեգիր շօրն երկնաւորի, և միշտ նախախնամէ անչափելի սիրով իւրով : Աւ դուք զմաք հոգեղինաց՝ բարեբանութեամբ օրհնեցէք ընդ մեզ զՄատուած, որ հաշտեցոյց զձեզ ընդ մեզ, և փառաւորեաց ի յերկինս և ի յերկրի, օծեալն Մատուած

և թագաւորն ամենեցուն Վրիստոս որդի Մատուծոյ. ասպ ի յիշատակել զփառաւորիչս անուանորա օրհնութեամբ և գովութեամբ հանդերձ բարձր արարէք զվիահեծան տէրութիւն և զմեծ վայելչութիւն նորա, ուստի յարէ ասելով, ի « յիշատակի սորա բարձր արարէք յաւիտեան, : Յիշատակ սրբոց տեսանի աւանդեալ յեկեղեցիս յառաքելոց անտի, որպէս գրէ Պօղոս Աբբ. ԺԳ. 7. « Յիշեցէք զառաջնորդս ձեր, : այս ինքն « յուշ արասցիք ընկեր առ ընկեր, որք խօսեցան ձեզ զբանն Մատուծոյ, հայեցեալք յելս դնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն, : ուր ասէ մեկնին « տեսանեմք ի բանէս զառաքելական աւանդութիւնս՝ թէ հաւատացելոց մտադիւր պարապել արժան է, ի յիշատակս վարուց տօնից սրբոց փոխարելոց ի յերկինս հաղորդ լինիցիք պատուելով զնոսա, և հետեւելով վարուց և վարդապետութեան նոցա և զործոց սրբոցն Մատուծոյ, և մանաւանդ առաքելաշնորհ վարդապետաց. զի ոչինչ այնպէս յորդորիչ է ի յանձնառութիւն աւետարանական վարուց, քան լսել զվարդապետութիւն, և տեսանելն զործովք վիսյեալ. բանք և օրինակք կրկին թեք են առ ի վերացուցանել զմարդն յատրայնոցս առ Մատուած. գիտել զգործելն, և տեսանել զեղանակ գործելոյ կատարումն է ամենայն արհեստից, : և զկնի ասէ « կատարեալ նմանողութիւն առ սուրբս այնու վճարի, յորժամ ի յիշել զգործս նոցա յիշեցեմք և զվաստակս նոցա առ Մատուած, որովք ի բարեխօսութիւն մեր շարժեմք զնոսա. և ի հակառակէն տեսաք հմտութեամբ, զի վերջացեալքն ի կար-

դարոյ առ նոսա վերջացան զլսովին ի համեմատութենէ վարուց նոցա, զի կարծելով զՔրիստոս մեծարել, որք էին ի Առտերական աղանդոց, անմեծար արարին զճառայս նորա, որով յերկոցունց ևս անօգնական մնացին: Աւ դարձեալ ի վերայ բանին թէ՛ « ի պէտս սրբոց հաղորդեցարուք », . Ըռովմ. զԼ. ԺԲ. 15. ասէ թէ բազումք այսպէս մեկնեն, ի յիշատակս տօնից սրբոց փոխադրելոց յերկինս՝ հաղորդ լինիցիք, պատուելով զնոսա, և հետեւելով վարուց և վարդապետութեան նոցա, որովք յայտնապէս երևի թէ վասն այնր աւանդեցին զյիշատակս սրբոց, զի յիշելով զնոսա՝ նմանող լինիցին նոցա հաւատով և զործովք բարեաց, և ի դէպ ժամու ընկալցին զբարեխօսութիւն ի նոցանէ, ի պէտս հոգեկանաց և ժարմնականաց, և ի պատիւ սրբութեան նոցա. և զի սա է մի ի պանծալի սրբոց և ի կամարարացն Աստուծոյ փառաւորեալն ի յերկինս և ի յերկրի, հրեշտակն ի մարմնի հրաշալին Յակօբ, ապա ի յիշատակել և ի պատուելն զսա արժանապէս, բարձրացուցանել օրհնելովութեամբ պարտ է զամենամեծ տէրութիւն ընտրողին և պսակողին, որ վարձատրէ փառաւորէ և պսակէ զսիրելիս իւր, և զփառաւորիչս անուան իւրոյ. ուստի ըստ կարգի յարէ ասելով « բարձր արարէք յաւիտեան », : Բարձր առնելն՝ է բարձրացուցանել զանուն նորա, և մեծացուցանել զտէրութիւն նորա ըստ Առուներխոսի, և ըստ Ամբրոնացոցն, Մեկ. Գան. զԼ. Գ. « մեծացուցանելն, և օրհնելն, և փառաւորելն առ մի հայի խորհուրդ. բայց պարտ է լինել յաւիտեան, այս ինքն մինչև ցվախճան կենաց և աշ-

խարհի, և ոչ առ ժամանակ ինչ, այլ որպէս յսկզբանն, նոյնպէս ի մէջն և յաւարտն ըստ տեսլեան Ազելի. զԼ. Ա. որ ետես անիւ ի մէջ անուոյ, զորմէ ասէ Առու. « անիւ ի մէջ անուոյ՝ է կեանք ի մէջ կենի, զի որպէս յառաջն էր մաքուր, այնպէս լեցի ապառնին հետեւեալն. վասն որոց ասաց « յաւիտեան », . որպէս թէ ասէ, ով որդիք նորոյ սիօնին ի յիշատակել ձեր զտուրքն և զերանելին Աստուծոյ զերջանիկ հայրապետն, բարձր արարէք զպսակիչն սրբոց՝ զԱստուած մեր զՔրիստոս յաւիտեան յիշատակաւ, և ի բոլոր կեանս ձեր օրհնել և զովաբանել զամենամեծ Տէրութիւն նորա, և զամբաւ զիտութիւն և իմաստութիւն նորա. որով յառաջքան զամենայն ընտրեաց ի միտս իւր՝ ի փառս իւր, և յօգուտ մեղսամաճեալ որդւոցս: Ապա ըստ սմին մտաց յարէ պատշաճապէս և ասէ:

(Նորունիւն)

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՏԵՂԼԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՄԵՅ

(Նորունիւն)

Բ. Երազմուտի Երազմուտի Երազմուտի

Յովհաննէս Աթողիկոս ցուցանէ զԵրազմուտեան յԱրազգաւորս ի բազում տեղիս պատմութեան իւրոյ. որ Աւանն է պարտի ունել ընդ իւրեաւ և շուրջ զիւրեաւ զիւղորայս, զորս ոչ է պարտ անդր քան զգետն որոնել, այլ որք յիւրում մերձակայութեանն և ի ցամաքակողմն անդր կան: